ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/26

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի 19.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մանվել Ջալավյան» ԱՁ-ն (այսուհետ՝ նաև ԱՁ) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 19.02.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.

ՀՀ ոստիկանության զորքերի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 01.02.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն (այսուհետ նաև Բողոքաբեր):

Բողոքաբերը թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել երկու չափաբաժնի համար 3,900 ՀՀ դրամ միավորի գնով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի

(այսուհետ նաև՝ Կոմիտե) կողմից 09.02.2018թ. տրված եզրակացությունը, որոշել է Բողոքաբերի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքաբերը 14.03.2018թ. դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 01.02.2018թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ԱՁ-ի կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոգրյալ գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին 14.02.2018թ. տրվել է թիվ 1779 տեղեկանքը, համաձայն որի՝ «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն 01.02.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, գտնում ենք, որ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, իսկ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները»:

Ելնելով վերոգրյալից՝ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն Խորհրդին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության զորքերի կողմից տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը, նույն որոշումից հետո կայացված մնացած այլ որոշումները, այդ թվում և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր ԱՁ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>ՀՀ ոտիկանության զորքերի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը 21.02.2018թ. դիմել էր ՀՀ ոստիկանության զորքերին (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից Խորհրդին չի տրամադրվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սերգո Համբոյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի կողմից 19.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3, 09.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունները, «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, 07.09.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (այսուհետ՝ Կոմիտե)

կողմից Պատվիրատուին ուղարկված եզրակացությունը, Կոմիտեի ՀՎՍՎ թիվ 5 բաժնի կողմից 14.02.2018թ. ԱՁ-ին տրամադրած տեղեկանքը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Պատվիրատուն՝ ՀՀ ոստիկանության զորքերը, տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընթացակարգի Հրավերի մաս կազմող Պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ գնային առաջարկները պետք է ներկայացվեն համաձայն տեխնիկական բնութագրով բոլոր ծառայությունների համար ներկայացված միավորի գնի:

Ընթացակարգի շրջանակներում, ի թիվս այլ մասնակիցների, 01.02.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն:

Հանձնաժողովը՝ 02.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.7 կետով արձանագրել է, որ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար կազմել են համապատասխանաբար 1,900 ՀՀ դրամ և 3,000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 1.8.1 կետով Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Մանվել Ջալավյան» ԱՁ-ին և հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 09.02.2018թ. Պատվիրատուին ուղարկված եզրակացության, «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 1,832 ՀՀ դրամի չափով:

14.02.2018թ. Պատվիրատուի կողմից հրապարակած «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ արձանագրվել է, որ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի կողմից ներկայացված

հայտը մերժվել է, քանի որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Մանվել Ջալավյան» ԱՁ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ, որի գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար համապատասխանաբար 1,900 ՀՀ դրամ և 3,000 ՀՀ դրամ՝ միավորի գներով: Բողոքաբերը հայտնել է նաև, որ Ընթացակարգի Հրավերով մասնակիցներից պահանջվել էր գնային առաջարկները ներկայացնել ըստ տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների միավորի գնի: Հանձնաժողովի կողմից «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի հայտը մերժվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ, ինչով պայմանավորված Բողոքաբերը 14.03.2018թ. դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 01.02.2018թ. ԱՁ-ի կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ի պատասխան վերջինիս հարցմանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին 14.02.2018թ. տրվել է տեղեկանք, որի համաձայն՝ «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն 01.02.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

ԱՁ-ն Խորհրդին ներկայացրեց վերը նշված փաստը հավաստող՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5-րդ բաժնի կողմից «Մանվել Ջալավյան» ԱՁ-ին 14.02.2018թ. տրված թիվ 1779 տեղեկանքը:

Բողոքի քննության նպատակով 12.03.2018թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պտավիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջի համաձայն՝ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է գնվող ծառայության միավորի համար հաշվարկված գնով, որի նկատմամբ և հաշվարկվել է ԱՁ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված թույլատրելի շեմը, ուստի և ԱՁ-ի՝ 1,832 ՀՀ դրամ կազմող հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չափը գերազանցել է վերը նշված շեմը: Միևնույն ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ մասնակցի հետ պայմանագիրը կկնքվի տպիչ սարքերի

սպասարկման և վերանորոգման ծառայությունների ողջ ծավալի մատուցման համար նախատեսված ընդհանուր գնով:

Բողոքաբերը Խորհրդին ներկայացրեց նաև ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.02.2018թ. պարզաբանում տրամադրելու վերաբերյալ գրությունը, որով «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն լիազորված մարմնին մասնավորապես հայտնել է, որ ՀՀ ոստիկանության կողմից տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների (ԳՄԱ կոդ-50311120) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգ, որի նախահաշվային գինը՝ համաձայն տեղեկագրում հրապարակված գնումների պլանի կազմել է 750,000 ՀՀ դրամ: Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնային առաջարկները պետք է ներկայացվեն համաձայն տեխնիկական բնութագրով բոլոր ծառայությունների համար ներկայացված միավորի գնով: Միաժամանակ, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները կազմել է 1,832 ՀՀ դրամ: Սակայն, ըստ ԱՁ-ի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերի միջև պայմանագիրը պետք է կնքվի ընդհանուր գնով, և հիմք ընդունելով նախահաշվային գինը, ակնհայտ է դառնում, որ ԱՁ-ն հարկային պարտավորությունները չեն գերազանցել վերջինիս գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը: Ելնելով վերոգրյալից՝ ԱՁ-ն խնդրել է հայտնել, արդյոք «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի հայտը չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, եթե ՀՀ ոստիկանության զորքերի կողմից տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգի նախահաշվային գինը և կնքվելիք պայմանագրի գինը գնումների պլանի համաձայն կազմել է 750,000 ՀՀ դրամ (ԳՄԱ կոդ-50311120):

Ի պատասխան ԱՁ-ի 26.02.2018թ. գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներով: Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին: Վերոգրյալով պայմանավորված լիազորված մարմինը հայտնել է, որ մասնակիցների

ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին մասի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն (...): Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի

ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի՝

• 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.14 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի

գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի Հրավերով սահմանված պահանջի համաձայն՝ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է առաջարկվող ծառայության միավորի գնով, որի նկատմամբ և Պատվիրատուի կողմից հաշվարկվել է ԱՁ-ի՝ ժամկետանց հարկային պարտավորությունների գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը, և վերջինիս հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է ԱՁ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ, ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից «Մանվել Ջալավյան» ԱՁ-ին 14.02.2018թ. տրված թիվ 1779 տեղեկանքի՝ ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 01.02.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից ժամկետանց հարկային պարտավորությունների գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը պետք է հաշվարկվեր ԱՁ-ի կողմից պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնի նկատմամբ, այլ ոչ թե ծառայությունների համար ներկայացված միավորի գնի նկատմամբ: Հետևաբար, Հանձնաժողովը, ԱՁ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

Խորհուրդն՝ արձանագրելով, որ ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել, գտնում է, որ ԱՁ-ի հայտն այս մասով համապատասխանել է Հրավերի պահանջներին, այսինքն, ԱՁ-ն, ըստ էության, ապահովել է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքի հետ կապված՝ Օրենքի, որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված չափանիշին համապատասխանելու պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի կողմից 19.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 14.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ «Մանվել Ջալավյան» ԱՁ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը, ինչպես նաև նույն որոշումից հետո կայացված մնացած այլ որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշումներ:
3. Պարտավորեցնել «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**